ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՊԱԼԱՏ
«ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ

375026 , ք. Երևան ընդունարան ☎ 442 848
Գ. Նժդեհի 26 հաշվապահ. ☎ 445 857 ձև N5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 13/57/25-2

31.01.2025թ. ք. Երևան

1. Պատվիրատու – ՀՀ Արարատի մարզի «Արարատի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ, հասցե՝ ք. Արարատ Շահումյան փ. 34
2. Եզրակացությունը կազմված է փորձագետ գնահատող – Վ. Խաչատրյանի կողմից
3. Հիմք 20□01□2025թ ծառայությունների մատուցման պայմանագիր
4. Գնահատման առարկան -- <<VAZ21214–120–40>> մակնիշի ավտոմեքենա
5. Գնահատման առաջադրանքը— գնահատել ներկայացված <<VAZ21214–120–40>> մակնիշի ավտոմեքենան
6. Զննման աշխատանքները կատարվել են՝ 23.01.2025թ
7. Գնահատման աշխատանքերը ավարտվել են՝ 31.01.2025թ.

Զննում

Պատվիրատուն, գնահատման նպատակով զննման է ներկայացրել <<VAZ21214–120–40>> մակնիշի ավտոմեքենան: Ներկայացվել է տրանսպորտային միջոցի հաշվառման XB921151 վկայագրի պատճենը համաձայն որի և փաստացի զննման արդյունքների մեքենայի տվյալներն են՝

- Արտադրման տարեթիվը – 2013թ.
- Թափքի տեսակը-ունիվերսալ
- Նույնականացման /VIN/ համարը- XTA212140D2129733
- Գույնը-սպիտակ
- Հաշվառման համարանիշը-377 CN 61

Մեքենայի զննումն իրականացվել է տեսողական զննության եղանակով:

Զննման ժամանակ ավտոմեքենան գտնվում էր միջին ապրանքային վիճակում: Վազքի ցուցմունքն հնարավոր չէր ֆիքսել մարտկոցի անսարքության պատճառով: Բեռնախցիկում տեղադրված էր գազի բալոն:

Զննման ընթացքում պարզվեց, որ ընթացքային հիմնական ագրեգատները, մեխանիզմները, դետալները և հանգույցները նախընթաց շահագործման ընթացքում ձեռք են բերել բնական շահագործողական մաշվածություն, դրան համապատասխան որակի և գոյապաշարի կորուստ: Թափքի վրա առկա են քերծված, խազված, փոս ընկած, տեղեր: Հետևի աջ անվաթևը դեֆորմացված: Ձախ դռան փականը և բռնակը վնասված: Անվադողերը՝ լավ վիճակ: Սրահ՝ բավարար վիճակ:

Արտաքին զննության ժամանակ միշտ չէ, որ հնարավոր է լինում հայտնաբերել դետալների և հանգույցների թաքնված արատները, որոնք կարող են ի հայտ գալ միայն հանգույցի կամ դետալի անմիջական բացման և ստուգման ժամանակ:

<<VAZ21214–120–40>> մակնիշի ավտոմեքենայի ապրանքային տեսքը պատկերված է սույն հաշվետվությանը կից լուսանկարչական հավելվածում, որը հանդիսանում է եզրակացության անբաժանելի մասը:

Շուկայական արժեքի որոշում համեմատական մեթոդով

Գնահատման այս մեթոդի կիրառման նպատակով կատարվել է շահագործված /բանեցրած/ նույն մակնիշի ավտոմեքենաների առաջարկների տվյալների ուսումնասիրություն:

Գնահատումը կատարվել է ելնելով դրանց կողմնորոշիչ միջին շուկայական արժեքի ելակետային ցուցանիշից, որի որոշման համար կիրառվել է հաշվարկի համեմատական վերլուծության մեթոդը՝ օգտվելով <<Արմէքսպերտիզա>> տեղեկատվական բանկում առկա տվյալներից, ինտերնետային կայքերում տեղադրված վաճառքի հանված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տղեկատվությունից, առաջարկվող գների վերլուծության արդյունքներից, հաշվի առնելով տրանսպորտային միջոցների փաստացի տեխնիկական և ապրանքային վիճակը, թողարկման տարեթիվը, մաշվածության աստիճանը: Ավտոմեքենայի շուկայական արժեքը որոշվել է գնահատման ուղղակի մեթոդի կիրառմամբ:

Գնահատման ուղղակի մեթոդի կիրառման ժամանակ կատարված հաշվարկների արդյունքում, եթե վարիացիոն գործակիցը /տատանման սահմանը 0,03-0,15/ չի գերազանցում 0,15 գործակիցը, այդ ժամանակ ընտրությունը համարվում է միատեսակ, նույնակերպ և հաշվարկած արժեքը կարող է համարվել տվյալ ա/մ-ի շուկայական արժեք:

Երկրորդային շուկայում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են հետևյալ առաջարկվող գների ընտրություն.

<<VAZ21214-120-40>> մակնիշի ավտոմեքենա, թողարկման տարեթիվը 2013թ.

2700000 դրամ,2480000 դրամ, 2600000 դրամ, 2560000 դրամ,2800000 դրամ

Հաշվի առնելով, որ վերոնշված գները առաջարկներ են, մեր կողմից կիրառվել է 0,95 սակարկության գործակիցը, որի արդյունքում ստացել ենք հետևյալ արժեքները.(կլորացված)

Ա= (2565000+2356000+2470000+2432000+2660000) : 5 = 2496600 ≈ 2500000 ՀՀ դրամ

Ստացված ընտրության վարիացիոն գործակիցը հավասար է՝

$$V = \frac{\sqrt{\frac{(2560000-2500000)^2+(2356000-2500000)^2+(2470000-2500000)^2+(2432000-2500000)^2+(2660000-2500000)^2}{4}}}{2500000} = 0{,}047$$

Բանեցրած ա/մ-ների ընտրված արժեքները միատեսակ են, վարիացիոն գործակիցը /V<0.15/ և կազմում է 0,047, հետևաբար, հաշվարկված 2500000 դրամը կարող է համարվել միջին շուկայական արժեք՝ միջին տեխնիկական և ապրանքային վիճակում գտնվող ավտոմեքենաների համար: Հաշվի առնելով, որ ներկայացված ավտոմեքենան

ունի արատներ, վնասվածքներ, բացակայող պահեստամասեր, մեր կողմից կիրառվել է ապրանքային վիճակի ընդհանրացված նվազեցնող գործակից՝ 0,95:

Այսպիսով՝ գնահատման տրամադրված <<VAZ21214–120–40>> մակնիշի ավտոմեքենայի արժեքը կարող է կազմել՝**2500000 դրամ × 0,95 = 2375000 /երկու միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար/ՀՀ դրամ:**

Եզրակացություն
հաշվարկված արժեքի վերաբերյալ

Գնահատման տրամադրված 2013թ արտադրության <<VAZ21214–120–40>> մակնիշի ավտոմեքենայի շուկայական արժեքը, հաշվի առնելով թողարկման տարեթիվը, փաստացի տեխնիկական և ապրանքային վիճակը 31.01.2025թ. դրությամբ կարող է կազմել՝ **2375000/երկու միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար/ՀՀ դրամ:**

Հատուկ պայմաններ

1. Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունը ամբողջությամբ անկանխակալ են:
2. Գնահատողի կողմից կատարված աշխատանքի արդյունքների իսկությունը հիմնված է նրա աշխատանքային փորձի և մատչելի տեղեկատվության վրա:
3. Գնահատողը պատրաստ է վերանայել գնահատման արդյունքը լրացուցիչ, տվյալներ ի հայտ գալու գալու դեպքում, գնահատումից հետո մեկամսյա ժամկետում:
4. Գնահատողը պատասխանատվություն չի կրում գույքի այն թերությունների համար, որոնք հնարավոր չէ հայտնաբերել տեսողական զննմամբ:
5. Կազմված եզրակացությունը մասնագետ - գնահատողի կարծիքն է գույքի հավանական շուկայական արժեքի վերաբերյալ:

Օգտագործված աղբյուր

1. Ինտերնետային կայքեր՝ list.am, avto.am,
2. <<Оценка транспортных средств >> под редакцией М. Улицкого

Փորձագետ - գնահատող՝ **Կ. Խաչատրյան**

Հավելված

Գնահատվող գույքի լուսանկարներ

Լուսանկար1

Լուսանկար2

Լուսանկար3

Լուսանկար4

Լուսանկար5



Լուսանկար6

Լուսանկար7

Լուսանկար 8



Լուսանկար9

Լուսանկար10

Լուսանկար11



Լուսանկար12

Լուսանկար13	Լուսանկար14
Լուսանկար15	Լուսանկար16